


Հատուկ բանկային հաշիվների սակագներ (Ֆիզիկական անձանց համար)

Սոցիալական փաթեթի հաշվի սակագներ

Ճառայություն	Սակագին
Նպատակային խումբ	Բանկում ընթացիկ հաշիվ ունեցող ֆիզիկական անձինք, ովքեր իրավունք ունեն օգտվել ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1691-Ն որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթից
Սոցիալական փաթեթի հաշվի արժույթ	ՀՀ դրամ
Սոցիալական փաթեթի հաշվի բացում և սպասարկում	Անվճար
Սոցիալական փաթեթի հաշվի բացման, պարտավորությունների վերաբերյալ և վարկերի ընդհանուր համապատասխանության մասին տրամադրում	անվճար

Հաշվից կանխիկացում	Անվճար
Հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	Տարեկան անվանական տոկոսադրույք Տվյալ պահին Բանկում “Ցպահանջ” ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույք
<p>Ուշադրություն՝ Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք դուք, եթե ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով: Տարեկան տոկոսային եկամտաբերության կարգը կարող եք գտնել մեր ինտերնետային կայքում՝ www.inecobank.am :</p> <p>Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի՝ Տոկոսը ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդին վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես Հաճախորդի հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկ վերը հիշատակված օրենքով սահմանված չափով և փոխանցում պետական բյուջե:</p> <p>Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սոցիալական փաթեթի հաշվի նկատմամբ հաշվարկվող տոկոսների չափը՝ նախապես հաճախորդին ծանուցելով այդ մասին փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 15 օր առաջ, եթե դիմում/պայմանագրով այլ բան նախատեսված չէ:</p>	
Հաշվով հնարավոր գործառնությունների տեսակներ	Հաշվի համալրում  Սոցիալական փաթեթի համար հատկացվող գումարի փոխանցման ստացում

	Հաշվից ելքագրում Ռ ՀՀ կառավարության 27.12.2012թ. N 1691- Ն որոշմամբ սահմանված գործառնություններ, ընդ որում տվյալ գործառնությունների իրականացման նպատակով կատարվող փոխանցումների համար սակագին չի սահմանվում:
--	---

Սոցիալական ապահովության հաշվի և ArCa Pension դեբետային քարտի սակագներ

Ճառայություն	Սակագին
Նպատակային խումբ	Անձ, ում օրենքով վճարվում է պարբերական դրամական վճարի գումար
Սոցիալական ապահովության հաշվի արժույթ	ՀՀ դրամ
Սոցիալական ապահովության հաշվի բացում և սպասարկում	անվճար ¹

¹ Սոցիալական ապահովության հաշվի բացման հետ պարտադիր անվճար բացվում է նաև ՀՀ դրամով ընթացիկ հաշիվ:

Սոցիալական ապահովության հաշվից կանխիկացում	անվճար
Սոցիալական ապահովության հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
Սոցիալական ապահովության հաշվով հնարավոր գործառնությունների տեսակներ	<u>Հաշվի համալրում</u> Միայն օրենքով սահմանված պարբերական դրամական վճարի գումարների ստացում <u>Հաշվից ելքագրում</u> ❖ Կանխիկ ելքագրում ❖ Փոխանցում Բանկում հաճախորդի հաշիվներին այլ
Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ
Քարտի գործողության ժամկետ	10 տարի
Քարտի թողարկում և քարտային հաշվի սպասարկում	անվճար
Կից քարտերի հնարավորություն	-
Կորցված կամ վնասված քարտի վերաթողարկում	անվճար
Նոր PIN կոդի տրամադրում	անվճար
Քարտով կանխիկ տրամադրում Ինեկոբանկի կանխիկացման կետերում	0%
Քարտով կանխիկ տրամադրում ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կանխիկացման կետերում	0.5%
Քարտով կանխիկացման գործարքների օրական առավելագույն սահմանաչափ	300,000 ՀՀ դրամ

<p>Քարտով իրականացված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրության ուղարկում</p>	<p>Յուրաքանչյուրը 10 ՀՀ դրամ, եթե հաճախորդը ցանկանում է ստանալ SMS հաղորդագրություն</p> <p><i>Հաճախորդի կողմից այլ հանձնարարական չլինելու դեպքում SMS հաղորդագրությունները ուղարկվում են 1,000 ՀՀ դրամ/ 2 ԱՄՆ դոլար/ 2 եվրո/125 ռուբլի գումարը գերազանցող գործարքների համար:</i></p>
<p>Քարտային հաշվի վաղաժամկետ փակում</p>	<p>անվճար</p>

Եսքրոու հաշվի սակագներ

Ծառայություն	Սակագին
<p>Հաշվի նկարագիր</p>	<p>Եսքրոու հաշիվը հատուկ բանկային հաշիվ է, որի վրա դեպոնացվում են ապրանքի, ծառայության, անշարժ գույքի ձեռքբերման կամ այլ տեսակի գործարքների միջոցները՝ որպես</p>

	գործարքի կատարման երաշխիք: Գումարը հասանելի է դառնում միայն պայմանագրով պահանջվող փաստաթղթերը Բանկ ներկայացման դեպքում:
Եսքրոու հաշվի արժույթ	արժույթը պայմանավորված է գործարքի արժույթով
Եսքրոու հաշվի բացում²	0,2% գործարքի գումարից, Նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ Առավելագույնը՝ 300,000 ՀՀ դրամ
Գործարքի պայմանների փոփոխության վճար	20 000 ՀՀ դրամ
Եսքրոու գումարի կանխիկացում	անվճար
Եսքրոու հաշվին դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
Եսքրոու Հաշվի փակում	Անվճար, գործարքի իրականացումից անմիջապես հետո

Ընդհանուր դրույթներ

² Որոշ դեպքերում Բանկի որոշմամբ կարող է կիրառվել սույն սակագներից տարբերվող վճար:

Բանկային հաշվի բոլոր տեսակների համար

1. Սույն Սակագները և «Ինեկոբանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից հաստատված «Բանկային սպասարկման հիմնական պայմաններ»-ը (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) միասին հանդիսանում են Ինեկոբանկ ՓԲԸ բանկային հաշվի ծառայության միասնական տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց համար և հանդիսանում են «Բանկային ծառայությունների տրամադրման դիմում/պայմանագիր (ֆիզիկական անձ հաճախորդների համար)» փաստաթղթի անբաժանելի մասը: Օգտագործվող հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ Հիմնական Պայմաններում:
2. Սույն փաստաթղթով սահմանված բանկային հաշիվները (այսուհետ՝ Հաշիվ/ Հաշիվեր) բացվում են անժամկետ (բացառությամբ Էսքրոու հաշվի, որոնք փակվում են անմիջապես գործարքի ավարտից հետո):
3. Հաշվի բացման համար անհրաժեշտ մուտքագրվող նվազագույն գումար, ինչպես նաև հաշվի նվազագույն մնացորդ չի սահմանվում:
4. 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող կանխիկ տրամադրումն իրականացվում է նախօրոք ներկայացված հայտի հիման վրա, որը Բանկին ներկայացվում է առնվազն մեկ օր առաջ՝ մինչև ժամը 14:45-ը: Առանց նախնական պատվերի երեք միլիոն ՀՀ դրամից ավելի գումարների տրամադրումը Բանկի կողմից կարող է մերժվել կամ բավարարվել՝ նշված գումարը գերազանցող գումարի նկատմամբ 0.5% չափով կանխիկ գումարի ելքագրման լրացուցիչ սակագին գանձելու իրավունքով:
5. Սահմանափակումների բացակայության դեպքում Բանկային հաշիվները փակվում են անվճար:
6. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

Ընդհանուր դրույթներ ArCa Pension դեբետային քարտերի համար

1. Քարտային հաշվի նվազագույն մնացորդ չի սահմանվում:
2. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը 0% է:
3. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը 10 գործարք է:
4. Մեկ անկանխիկ գործարքի համար առավելագույն սահմանաչափ, ինչպես նաև անկանխիկ գործարքների օրական առավելագույն սահմանաչափ և քանակ չի սահմանվում:

5. Հաճախորդի դիմումի համաձայն կանխիկացման սահմանաչափի մեկանգամյա բարձրացման դեպքում³ (գործում է մինչև տվյալ օրվա 24:00-ն) կիրառվում է 3,000 ՀՀ դրամ սակագին, իսկ պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար բարձրացման դեպքում³ 5,000 ՀՀ դրամ սակագին:
6. Քարտից քարտ փոխանցման⁴, ինչպես նաև քարտային հաշվից նույն հաճախորդի այլ բանկային հաշիվներին փոխանցման⁴ դեպքում (ԻնեկոՕնլայն/ԻնեկոՄոբայլ համակարգերով) միջնորդավճար չի գանձվում:
7. Քարտի շտապ պատվիրման դեպքում լրացուցիչ գանձվում է 3,000 ՀՀ դրամ սակագին: Շտապ պատվիրման դեպքում քարտը տրամադրվում է 1 բանկային օրվա ընթացքում միայն Բանկի Կոմիտաս 2 մասնաճյուղում , իսկ Բանկի այլ մասնաճյուղերում նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը:
8. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայությունը ակտիվանում է քարտի պատվիրման պահին հաճախորդի համապատասխան հանձնարարականի հիման վրա: Հաճախորդը կարող է նաև ընտրել գումարի չափը, որը գերազանցող գործարքների վերաբերյալ ցանկանում է ստանալ SMS հաղորդագրություն: Վճարային քարտով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայության ակտիվացում/ապասկտիվացում, ինչպես նաև վերոնշյալ գործարքի գումարի չափի փոփոխություն կարող է իրականացվել քարտի գործողության ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից Բանկի տարածքում/ԻնեկոՕնլայն համակարգում ներկայացված համապատասխան դիմում-հայտի հիման վրա:
9. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայության շրջանակում SMS հաղորդագրություններ չեն ուղարկվում ԻնեկոՕնլայն/ԻնեկոՄոբայլ համակարգերի միջոցով քարտային հաշվին կատարված մուտքագրման և քարտային հաշվից ելքագրման գործարքների վերաբերյալ:
10. Քարտի բլոկավորման և ապաբլոկավորման համար միջնորդավճար չի գանձվում:
11. Քաղվածքի ամսաթիվ (Statement date) է համարվում յուրաքանչյուր ամսվա 1-ը: Ամսական քաղվածքի տրամադրումը անվճար է: Յուրաքանչյուր լրացուցիչ քաղվածքի տրամադրման դեպքում գանձվում է սակագին՝ համաձայն համապատասխան բանկային հաշվի փաթեթի:
12. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

³ Կանխիկացման սահմանաչափի բարձրացումը իրականացվում է Բանկի համաձայնությամբ:

⁴ ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող փոխանցումների համար կիրառվում են «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար սահմանված սակագները, Ինեկոբանկի պաշտոնական կայքի «Առցանց վճարումներ» համակարգով կատարված գործարքների համար կիրառվում են «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները: